

ՄԿՐՏԻՔ ԱՐՄԵՆ

ՅԵՐՐՈՐԻ



ՄԻԼԻՑԻՈՆԵՐԸ

ԵԿԱՐՍԵՐԸ

Մ. ԲԱՂԿՍԱՐՅԱՆԻ

520

891.99Ծ  
Ա-91

1937

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԵՆՏՐԱԼ ԲՈՒԿՄԱՆԻ ԿՈՄԻՏԵ  
ԵՐԵՎԱՆ

ՅԵՐԵՎԱՆ



1.

Պետիկի հայրն աշխատում էր խաղալիքներ պատրաստող արհեստանոցում: Ամեն առավոտ մըթմըթալով գնում էր աշխատանքի, կեսօրից՝ ետո մըթմըթալով վերադառնում էր տուն: Նա աշխատել չէր սիրում:

Մի անգամ նա Պետիկին հարցրեց:

— Պետիկ ջան, ի՞նչ խաղալիք ես ուզում գնեմ քեզ համար: Մենք արհեստանոցում շատ տեսակ խաղալիքներ ենք պատրաստում:

— Յես միլիցիոններ եմ ուզում, — պատասխանեց Պետիկը մի քիչ մտածելուց հետո: — Կգնեմ անկյունում, մուկը կվախենա, պանիր չի ուտի, կատուն դգույշ կմնա, տատիկի քայլերու ժամանակ նրա փոտների տակ չի ընկնի: Միլիցիոնները ձեռքը կբարձրացնի, ախինքն՝ տատիկ, դու կաց, իսկ կատաւ, դու՛ անցիր: Հետո նորից ձեռքը կբարձրացնի, ախինքն՝ ճանապարհն ազատ է, տատիկ, դու ել կարող ես անցնել .. Եզ տեսակ միլիցիոններ ունե՞ք, հայրիկ ..

— Ունենք, — պատասխանեց հայրը, — յես ինքս եմ պատրաստում:

Հայրը գնաց, իսկ Պետիկն ամբողջ օրն սկսեց անհամբեր սպասել նրա վերադառնալուն: Բայց հայրն ուշացավ: Յերեկ ժողով ունեւր: Պետիկն սպասեց, սպասեց ու քնեց:

55924  
0101

2.



Առավոտյան արթնանալով, Պետիկը լուսամուտի գոգում տեսավ միլիցիոնները: Ուրախ կերպով անկողնից դուրս թռավ, գնաց, վերցրեց: Հայրն արդեն գնացել էր արհեստանոց:

Խաղալիքն իսկական միլիցիոնների նման էր, միայն թե, շինված էր փայտից: Գլխին դրած էր շորե գլխարկ, կողքից կախված էր սուլիչը:

Պետիկը շորերը հագավ և սկսեց խաղալ: Միլիցիոններին դրեց սենյակի մեջտեղը, փորպեսզի նա հսկի անց ու դարձին, մայրիկն ու տատիկն իրար չզիպչեն, աթուռ Պետիկի ճանապարհը չըփակի:

Նա բարձրացրեց միլիցիոնների ձեռքը: Լավ էր: Իջեցրեց: Հիանալի յեր: Մի անգամ էլ բարձրացրեց և ուզում էր իջեցնել, յերբ հանկարծ նրա թևը պոկվեց:

Այ քեզ բան... Ինձ վախեցրեց միլիցիոններ կլինի: Պետիկը փորձեց թևը կպցնել իր տեղը: Բան դուրս չեկավ: Տխրեց:

Հանկարծ Պետիկը նկատեց, փոր միլիցիոնները գլխարկը ծուռն է դրել: Յեթե միլիցիապետն այդ




բանը նկատեր, անպայման կողառժեռ նրան կամ նկատողութուն կաներ:

— Ինձ վախեցրեց ե, բայց գոնե թող գլխարկն ուղիղ դնի, — մտածեց Պետիկը և փորձեց գլխարկն ուղղել: Ձեռքը հազիվ էր մոտեցրել, յերբ գլխարկը գլխից դուրս թռավ: Պետիկն ինչքան աշխատեց տեղը դնել, չկարողացավ, գլխարկը փոքր էր: Յերևի դա մի ուրիշ միլիցիոնների գլխարկ էր, փոր փոխա էր ընկել նրա գլխարկի հետ:

Պետիկը վշտացավ: Այ քեզ բան... Ո՞վ է տեսել գլխաբաց միլիցիոններ, այն էլ մի թևանի: Վերցրեց նրա կողքից կախված սուլիչը, փորպեսզի սուլի, շտապ ոգնության ավտոմոբիլը գա, նրան տանի հիվանդանոց թևը կպցնելու համար:

Փոխանակ շփոց հանելու, սուլիչը մի քանի անգամ խռխոց ու լոցեց:

— Ես ի՞նչ տեսակ միլիցիոններ ե, — դարձացավ Պետիկը: — Վոչ մի բանը կարգին չե:



Նա բռնեց նրա վոտքերից, վոր նրան քայ-  
լեցնի: Յեթե սուլիչը չի աշխատում, հեռախոս ել  
չկա, վոր հեռախոսով հայտնենք, ու ընմն միլիցիո-  
ները թող վոտքով գնա հիվանդանոց, - մտածեց  
Պետիկը, բայց այդ ել չհաջողվեց: Յերկու բայլից  
հետո միլիցիոները վոտքը պոկվեց, միլիցիոներն  
որորվեց և ընկավ հատակին:

- Հարբած ե, - յեզրակացրեց Պետիկը: - Իսկ  
հարբած միլիցիոներին ամենախիստ կերպով պատ-  
ժոււմ են: Ամսթ իրեն:

3.

Յերեկոյան Պետիկը հորը հարցրեց.

- Հայրիկ, միլիցիոներն իրավունք ունի՞ ա-  
ռանց գլխարկի պահակ կանգնելու:

- Ի ուրորովին:

- Թեւ կտրած մարդը կարո՞ղ ե միլիցիոներ  
լինել:

Վո՞չ:

- Իսկ գլխարկը ծուռ զնե՞ր:



- Յերբեք:
- Իսկ յեթե նա մի փոտանի՞ յե:
- Ամենևին:
- Նրա սուլիչը ձայն պիտի հանի՞:
- Անպայման:

— Վոր եղպես ե. յես ես միլիցիոներին չեմ ուզում, - ասաց Պետիկը և մահճակալի տակից դուրս քաշեց նրան:

Հայրը նայեց, ծիծաղեց: Մայրն ել ծիծաղեց: Թատն ել:

- Լավ, վաղը յես քեզ համար ուրիշ միլիցիոներ կբերեմ, - խոսք տվեց հայրը:
- Լավը բեր, - պահանջեց Պետիկը:

4.

Յերկրորդ միլիցիոներն առաջինին շատ նման էր, բայց նրա թևերն ու փոտներն ավելի ամուր էյին, գլխարկը գլխովն էր և ուղիղ էր դրած, սուլիչը սուլում էր: Պետիկն ուրախացավ: Ա՛յ, իր ուզածն ել հենց եղպիսի միլիցիոներ էր:

Սկսեց խաղալ:

— Այ նայիր, ընկեր միլիցիոներ, - բղավեց Պետիկը. - քաղաքացի փիսիկն ընկեր տատիկի փոսնամանը տարավ: Բանտարկիր:

Միլիցիոներն ուշադրություն չդարձրեց: Նա ուրիշ կողմ էր նայում:

Պետիկը նայեց միլիցիոների աչքերին և ապշեց: Նա շլփիկ էր: Մի աչքով լուսամուտին էր նայում, մյուս աչքով՝ դռանը: Պետիկը տխրեց: Չեուքը դեմ արեց ծնոտին և ցավակցելով հարցրեց.

— Ընկեր միլիցիոներ, ինչո՞ւ աչքերդ բժշկել չես տալիս: Եղպես շատ տգեղ ե...

Նա վերցրեց միլիցիոներին, շոյեց նրա գլուխը,



զգուշությամբ ձեռք տվեց աչքերին: Միլիցիոներն խսկույն կուրացավ:

— Վնյ, վնյ, վնյ, - բղավեց Պետիկը. - Սո յես չարեցի, ազնիվ հոկտեմբերիկի խոսք, յես չարեցի: Եղ ինչո՞ւ կուրացար: Հիմա ի՞նչ պիտի անես: Կուրանոց պիտի գնաս: Նպաստ պիտի ստանաս:

Միլիցիոները չպատասխանեց: Յերևի չափազանց բարկացած էր: Պետիկը նրան զգուշությամբ դրեց սեղանին, աշխատելով ցավ չպատճառել: Բայց հենց վոր նրան դրեց սեղանին, նա բարկությունից մեջտեղից կիսվեց, յերկու կտոր յեղավ:



Յերեկոյան Պետիկը նորից հորը փանգատվեց:  
 — Վեր քաղաքամասումն են ծառայում եղ ան-  
 պետք միլիցիոներները: Յես չեմ ուզում նրանց:  
 Նրանք ինձ պետք չեն:

— Ի՞նչ կա, ի՞նչ ե պատահել, — բարկացավ  
 հայրը: — Չլինի՞ ելի փշացրել ես:

— Հայրիկ, յես չփշացրի, նա ինքնիրեն փշա-  
 ցավ:

— Սուտ մի խոսիր, — ասաց հայրը:

— Սուտ չի խոսում, — միջամտեց մայրը: — Յե-  
 րեսան դեռ խաղալիքին ձեռք չտված, նա կտարը-  
 վեց: Յես կար եյի անում և նայում եյի: Ամեն  
 ինչ տեսա: Պետիկը մեղավոր չեր:

— Վնչ, Պետիկն ե մեղավոր, — պնդեց հայրը:

— Յես չեմ կարող ամեն ոք փող տալ, նրա համար  
 միլիցիոներ առնել: Թող լավ պահի:



ՄԿՂԴԱՍ

— Ախրը լավը բեր, վոր լավ պահի, — ասաց մայրը:

— Տուր տեսնեմ կարելի՞ յե նորոգել, — ասաց հայրը Պետիկին:

Պետիկը վազելով բերեց խաղալիքը: Հայրը սուինձով յերկու մասերն իրար միացրեց:

— Յեղավ, — ասաց նա և խաղալիքը մեկնեց Պետիկին: Պետիկը դեռ չէր վերցրել նրան, յերբ հանկարծ նրա գլուխը շրխալով գետին ընկավ:

Մայրը ծիծաղեց.

— Տեսա՞ր, վոր Պետիկը մեղավոր չե, այլ խաղալիքն է վատը, — ասաց նա:

Մայրիկ, լավ յեղավ, վոր գլուխն ընկավ, — ուրախացավ Պետիկը: — Հայրիկը նրա աչքերն իրենց տեղը կղնի և նորից կամբացնի:

— Աչքերն անպետք են, — մրթմրթաց հայրը: —

Տատիկը, վոր ներս եր մտել և լսեց այդ խոսքը, հարցրեց.

— Ինչո՞ւ յեն անպետք:

— Դե, յես ի՞նչ գիտեմ, — բարկացավ Պետիկի հայրը. — Ինչպես յերևում է, լավ չեն պատրաստված:

— Ո՞վ է պատրաստել:

— Յես...

— Գլուխն ով է պատրաստել, — հարցրեց մայրը:

— Յես...

— Մարմի՞նը:

— Յես...

— Հայրիկ, իսկ թևերն ու վոտքերն ո՞վ է պատրաստել, — հարցրեց Պետիկը:

— Ելի լես:

— Սուլիչն է՞լ ես դու պատրաստել:

— Սուլիչն էլ:

Տատիկը ժպտաց:



— Գլխարկն է՞լ, — նորից հարցրեց Պետիկը:

— Այո, գլխարկն էլ:

Մայրը ծիծաղեց:


— Ուրեմն վոչ թե յես եմ փչացրել միլիցիոները, այլ դու, — հաղթական կերպով յեզրակացրեց Պետիկը:

— Յեթե առաջին միլիցիոները լավը լինել, նա չէր փչանա, իսկ դու յերկրորդ միլիցիոները փոխարեն մի ուրիշ խաղալիք ել կառնեյիր Պետիկի համար, — ավելացրեց մայրը:

— Տեսնո՞ւմ ես, դու վոր արհեստանոցում վատ ես աշխատում, դա հենց քեզ է վնաս ու մեզ, — ավելացրեց Պետիկը:

Պետիկի հայրիկն ամաչեց, գլուխը կախեց, նստեց, մտածեց: Նա շատ յերկար մտածեց, ապա ուրախ-ուրախ գրկեց Պետիկին, համբուրեց և բացականչեց.

— Դու ճիշտ ես ասում, Պետիկ ջան: Մայրիկն  
 ել ե ճիշտ ասում, տատիկն ել: Յես եմ մեզավոր:  
 Մոսք եմ տալիս, փոր հենց վաղվանից լավ կաշ-  
 խատեմ, հարվածային կզառնամ: Համ խաղալիք  
 շատ կպատրաստեմ, համ աշխատավարձ շատ կըս-  
 տանամ: Իսկ քեզ համար, Պետիկ ջան, շուտով մի  
 ենպիսի միլիցիոներ կբերեմ, փոր ինչքան ել քա-  
 շես-քաշքշես, վաղվեել տաս, ձեռքերը շարժել տաս,  
 սուլել տաս, նայել տաս, գլուխը զես ու զեն շար-  
 ժես՝ նույնիսկ չհոգնի: Մի խոսքով կբերեմ մի իս-  
 կական միլիցիոներ...





291

7331

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

М. АРМЕН  
ТРЕТИЙ МИЛИЦИОНЕР  
Դեպ. Արմ. ՍՍՐ, Երևան, 1987 թ.

Պատ. խմբագիր՝ Ս Ի ր ա յ  
Սերազիսի Ա. Ա ռ գ ա ֆ ա ն յ ա ն

Գլխավորի լիազոր 1101, Հրատ. 8451. Պատվեր 1292 Տիրում 5000

Պետերասի տպարան. Ցերեխան, Լենինի № 65